ՀՏԴ 327.5(479.243)
Քաղաքագիտություն

Աշոտ ՂՈՒԼՅԱՆ
ԱրՊՀ, փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի
ավագ դասախոս
e-mail: aghoulyan@nankr.am

ԼՂՀ ՀՌՉԱԿՈՒՄՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՈՒՄԸ

Հոդվածում ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես անկախ պետության ձևավորման եռափուլ գործընթացի պատմական միջավայրը, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությանը առնչակից կողմերի միջև հարաբերությունների զարգացման ընթացքը, ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների, Երևանի և Բաքվի ղեկավարության արձագանքը Արցախում սկսված անկախացման գործընթացին, ինչպես նաև անկախության հռչակման իրավաքաղաքական հիմքերն ու նախադրյալները: Անդրադարձ է կատարվում նույն ժամանակաշրջանում արտաքին կապերի իրավական և ինստիտուցիոնալ զարգացման ուղղությամբ նորանկախ Հանրապետության ձեռնարկած քայլերին:

Բանալի բառեր՝ *ԼՂԻՄ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, անկախություն, հռչակագիր, Ադրբեջանի Հանրապետություն, ԱդրԽՍՀ, ԽՍՀՄ, հանրաքվե, արտաքին կապեր:*

А. Гулян

ПРОВОЗГЛАШЕНИЕ НКР И ИНСТИТУЦИОНАЛИЗАЦИЯ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

В статье представляется историческая среда трехэтапного процесса формирования Нагорно-Карабахской Республики как независимого государства, ход развития отношений между сторонами, вовлеченными в азербайджано-карабахский конфликт, реакция центральных властей СССР, руководства Еревана и Баку к начавшемуся в Арцахе процессу обретения независимости, а также политико-правовые основы и предпосылки провозглашения независимости. Внимание уделяется мерам, предпринятым Республикой в направлении правового и институционального развития внешних связей в данный период.

Ключевые слова*: НКАО, Нагорно-Карабахская Республика, независимость, декларация, Азербайджанская Республика, АзССР, СССР, референдум, внешние связи.*

A.Ghoulian

PROCLAMATION OF NKR AND INSTITUTIONALIZATION OF INTERNATIONAL RELATIONS

The article presents the historical environment of the three-stage process of the formation of the Nagorno-Karabakh Republic as an independent state, the development of relations between the parties involved in the Azerbaijani-Karabakh conflict, the reaction of the central authorities of the USSR, the leaders of Yerevan and Baku to the process of proclaiming independence in Artsakh, legal foundations and prerequisites for independence. Attention is paid to measures taken by the newly independent Republic in the direction of the legal and institutional development of external relations.

***Keywords**: NKAO, Nagorno-Karabakh Republic, independence, declaration, Republic of Azerbaijan, AzSSR, Soviet Union, referendum, foreign relations.*

Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության հռչակումը[1] պայմանավորված էր նախկին Խորհրդային Միության կենտրոնական իշխանությունների շարունակվող թուլացման պայմաններում Ադրբեջանի կողմից իրականացվող քաղաքականությամբ և ԽՍՀՄ փլուզման գործընթացում Հայաստանը լրացուցիչ մարտահրավերներից փրկելու առաջնահերթությամբ:

Պետական անկախությանը հանգեցրած իրավաքաղաքական եռափուլ գործընթացը սկիզբ առավ 1991թ. սեպտեմբերի 2-ին՝ ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզային և Շահումյանի շրջանի շրջանային խորհուրդների համատեղ նիստում՝ ԽՍՀՄ կազմում Ադրբեջանից անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակմամբ: Թե՛ ԽՍՀՄ կազմում ԼՂԻՄ կարգավիճակի բարձրացման, թե՛ անկախության գաղափարը փաստացի ենթադրում էին 1988թ. «Միացում» գաղափարի և դրանից բխող՝ 1989թ. դեկտեմբերի 1–ի ՀԽՍՀ ԳԽ և ԼՂ Ազգային խորհրդի Համատեղ հայտարարության տրամաբանության վերանայում:

Ժամանակագրական առումով ԼՂՀ հռչակումը հետևեց ԱդրԽՍՀ ԳԽ՝ Ադրբեջանի ազգային անկախության հռչակմանը, որով հռչակվում էր ադրբեջանական ազգային պետականության վերականգնումը 1918–1920թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության (ԱԴՀ) սահմաններում[2]: Ի պատասխան այդ քայլի՝ Լեռնային Ղարաբաղը պահպանեց սահմանադրական գործընթացի տրամաբանությունը՝ ապահովելով Ադրբեջանի կազմից դուրս գալու օրինականությունը ԽՍՀՄ օրենքների (նախևառաջ՝ 1990թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի

---

[1] *Տե՛ս* Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին Հռչակագիր, 2-ը սեպտեմբերի 1991թ.:
http://www.president.nkr.am/am/nkr/nkr1

[2] *Տե՛ս* «Декларация Верховного Совета Азербайджанской Республики о восстановлении государственной независимости Азербайджанской Республики, принятая на внеочередной сессии Верховного Совета», газ. «***Бакинский рабочий***», (Баку), 03.09.91.

լուծման կարգի մասին»[1] օրենքի) տեսակետից և համապատասխանությունը միջազգային իրավունքի պահանջներին:

Դրան հետևեց Ադրբեջանի ԳԽ նախագահության 1991թ. սեպտեմբերի 3-ի որոշումը, որով ԼՂՀ հռչակումը որակվեց հակասահմանադրական՝ հղումներ կատարելով բացառապես ԱդրՀ ներքին օրենսդրության վրա, այդ թվում՝ ազգային պետականության վերականգնման վերաբերյալ Հռչակագրի վրա[2]:

Ադրբեջանի կողմից անկախության հռչակման ու ԼՂՀ ստեղծման պայմաններում Հայաստանին անհրաժեշտ էր հստակեցնել սեփական դիրքորոշումը Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ, մասնավորապես՝ 1989թ. դեկտեմբերի 1-ի վերամիավորման մասին որոշման տեսանկյունից[3]: Սակայն սեպտեմբերի կեսերին խնդիրը լուծելու նպատակով գումարված Հայաստանի խորհրդարանի հատուկ դռնփակ նիստը որոշել է ՌՍՖՍՀ նախագահ Բ. Ելցինի և Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևի՝ տարածաշրջան կատարելիք այցից առաջ որևէ որոշում չկայացնել: Միևնույն ժամանակ Հայաստանի խորհրդարանը որոշում է կայացրել Հայաստանի անկախության հռչակումը (սեպտեմբերի 21) և ՀՀ նախագահական ընտրությունները (հոկտեմբերի 16) անցկացնել բացառապես նախկին ՀԽՍՀ սահմաններում, այսինքն՝ չնախատեսել արցախցիների մասնակցությունը:

Արդյունքում վերամիավորման իրավաքաղաքական իրողությունը որևէ կերպ չարտացոլվեց 1991թ. սեպտեմբերի 21-ի հռչակագրում զուտ աշխարհագրության առումով, և թեև 1989թ. դեկտեմբերի 1–ի համատեղ որոշումը ֆորմալ առումով հիշատակվում է Անկախության մասին 1991թ. սեպտեմբերի 21-ի հռչակագրի նախաբանում[4], այն իրավաքաղաքական մեկնություն չի ստանում բուն Հռչակագրի տեքստում:

Ադրբեջանի և ԼՂՀ-ի միջև ընթացող պետաիրավական սահմանազատման գործընթացի վրա Բ. Ելցինի և Ն. Նազարբաևի՝ հակամարտության գոտի կատարած այցը որևէ դրական ազդեցություն չունեցավ: 1991թ-ի սեպտեմբերի 20–23-ը Բաքու, Կիրովաբադ, Ստեփանակերտ և Երևան կատարված այցելությունները, ընդգծելով ՌԴ և Ղազախստանի ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը ԽՄ-ում առկա «բարդ» հակամարտությունների վրա ազդեցության հարցում, որոշակի քաղաքական պարտավորություններ դրեցին հակամարտության կողմերի վրա՝ փաստորեն բացառելով ՀՀ-ի կողմից ԼՂՀ՝ իբրև միութենական հանրապետություն ճանաչելու հնարավորությունը: Նման առաջարկով ղարաբաղյան կողմը, ի դեմս ԼՂ ժողպատգամավորների խորհրդի Գործադիր կոմիտեի նախագահի, 1991թ. սեպտեմբերի 22-ին դիմել է ՌՍՖՍՀ և Ղազախստանի նախագահներին, առաջարկելով, առանց կանխորոշելու ԼՂՀ կարգավիճակը, ճանաչել նրա ստեղծման

---

[1] *Տե՛ս.* Ведомости Съезда народных депутатов СССР и Верховного Совета СССР, 1990. № 15, ст.253 http://constitutions.ru/?p=2973 (12.04.13)

[2] *Տե՛ս:* Сурен Золян, ***Нагорный Карабах: Проблема и конфликт, 5.1. Политическая ситуация в регионе осенью 1991г.***, http://karabah.h18.ru/history/karabah/36-5.html

[3] Հետազոտող Ս. Զոլյանն, օրինակ, Հայաստանի ղեկավարության որդեգրած դիրքորոշումը 1991թ. ամառ-աշուն շրջանում ընդհանուր առմամբ գնահատում է «պարտվողական» /Տե՛ս. Сурен Золян, ***Нагорный Карабах: Проблема и конфликт, 5.1. Политическая ситуация в регионе осенью 1991г.,*** http://karabah.h18.ru/history/karabah/36-5.html

[4] *Տե՛ս.* Հռչակագիր Հայաստանի անկախության մասին, 23.08.1990թ., http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2602&lang=arm

իրողությունը, ինչպես նաև իրականացնել մի շարք այլ հրատապ քայլեր. ԼՂՀ-ից դուրս հանել բոլոր (բացի ԽՍՀՄ ՆԳՆ զորքերից) ստորաբաժանումները, հակամարտության գոտում ձերբակալվածների գործերի քննությունը վերապահել ՌԴ և Ղազախստանի իրավապահ մարմիններին, հայատարարել ԼՂՀ-ն ազատ տնտեսական գոտի, ապահովել ԼՂՀ տնտեսական ինքնաբավությունը, ապաշրջափակել հաղորդակցության ուղիները, ստեղծել ՌԴ և Ղազախստանի ներկայացուցիչներից բաղկացած վերահսկող-դիտարկող հանձնաժողով[1]:

Առաքելության արդյունքներն ամփոփվել են այսպես կոչված Ժելեզնովոդսկյան (քաղաք ՌԴ Ստավրոպոլի երկրամասում) հուշագրում (պաշտոնական անվանումը՝ «Համատեղ կոմյունիկե՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ Բ. Ն. Ելցինի և Ղազախստանի նախագահ Ն. Ա. Նազարբաևի համատեղ առաքելության արդյունքների մասին»): Այն բաղկացած էր 9 կետից, որից ամենակարևորը, թերևս, առաջինն էր, համաձայն որի՝ «Կողմերը համարում են, որ մինչև 1992թ. հունվարի 1-ը կարգավորման անհրաժեշտ և պարտադիր պայմաններ են հանդիսանում կրակի դադարեցումը, ԼՂԻՄ-ին վերաբերող Ադրբեջանի և Հայաստանի բոլոր հակասահմանադրական իրավական ակտերի անվավեր ճանաչումը, իշխանության օրինական մարմինների լիազորության ճանաչումը, հակամարտության գոտուց բոլոր (ԽՍՀՄ ՆԳՆ զորքերից բացի) ստորաբաժանումների դուրսբերումը»: Նախատեսվում էր նաև տեղահանված բնակչության փուլային վերադարձ՝ նախնառաջ բռնատեղահանված գյուղեր, պատանդների անհապաղ ազատում, երկշաբաթյա ժամկետներում երկաթուղու, օդային հաղորդակցության, կապի և հաղորդուղիների, իսկ այնուհետև և ավտոճանապարհների փոխշահավետ գործարկում[2]:

Թեև փաստաթուղթը ուրվագծում էր ղարաբաղյան կարգավորման համար անհրաժեշտ առաջնահերթություններն ու խնդիրները, այն հիմնված չէր փորձագիտական մշակումների վրա և չէր սահմանում խնդիրների լուծման մեխանիզմներ: Այն հանդիսացավ հակամարտության կողմերի՝ ԼՂ-Ադրբեջան և Հայաստան-Ադրբեջան ձևաչափով հարաբերությունների հաստատման և սեփական մոտեցումները հնչեցնելու միջոց[3]:

Միջնորդների այցի ընթացքում կողմերի արձանագրած պայմանավորվածություններն ու ստանձնած որոշ պարտականությունները գործնականում այդպես էլ մնացին անկատար: Շարունակելով ԼՂՀ դեմ ուժի գործադրումը՝ Ադրբեջանը քայլեր ձեռնարկեց ԽՍՀՄ-ի և ԼՂ-ի հետ իր ֆորմալ իրավական հարաբերությունների հիմքերի վերանայման ուղղությամբ:

1991թ. հոկտեմբերի 18-ին Միլլի մեջլիսի (նորանկախ Ադրբեջանի խորհրդարանը) կողմից ընդունված երկրի անկախության մասին սահմանադրական ակտը[4] փոփոխում և լրացնում էր Ադրբեջանի Սահմանադրությունը: ԱդրԽՍՀ ստեղծումը որակվում էր իբրև երկրի՝ Խորհրդային Ռուսաստանի կողմից զինված

---

[1] *Տե՛ս* Ս. Զոլյան (նույն տեղում՝ էջ 122–123)

[2] Համաձայնության ամբողջական տեքստը *տե՛ս*. http://www.vn.kazimirov.ru/doc1.htm

[3] *Տե՛ս* Гурушкин Павел Юрьевич. ***Карабахский конфликт. Первые попытки переговоров: Ошибки и достижения посредников***, Известия Российского государственного педагогического университета им. А.И. Герцена, Выпуск № 108/ 2009

[4] *Տե՛ս* ***Конституционный акт о государственной независимости Азербайджанской Республики***. Баку, 18 октября 1991 г., газ. «***Бакинский рабочий***», (Баку), 07.11.91. http://azerbaijan.az/portal/History/HistDocs/Documents/ru/09.pdf

ոտնձգության, բռնազավթման և բռնակցման արդյունք, իսկ ԽՍՀՄ հիմնադրման մասին 1922թ. պայմանագիրը՝ զավթողական և Ադրբեջանի մասով ստորագրման պահից՝ անվավեր: Փաստաթուղթն արձանագրում էր, որ «Ադրբեջանական Հանրապետությունը հանդիսանում է 1918թ. մայիսի 28-ից մինչև 1920թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդը»՝ դրանով իսկ հրաժարվելով ԱդրԽՍՀ իրավական ժառանգությունից[1]:

1991թ. նոյեմբերի 26-ին Միլլի մեջլիսն ընդունեց «Ադրբեջանական Հանրապետության Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի լուծարման մասին» օրենքը[2]: Ուժը կորցրած ճանաչվեցին 1923թ. հուլիսի 7-ի ադրբեջանական կենտրոնական գործադիր կոմիտեի հրամանագիրը «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծման մասին» և Ադրբեջանի ԽՍՀ 1981թ. հունիսի 16-ի «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին» օրենքը[3]:

Հրաժարվելով խորհրդային իրավաքաղաքական ժառանգությունից՝ Ադրբեջանը, փաստորեն, հրաժարվեց Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ Լեռնային Ղարաբաղը ներառելու բոլոր իրավաքաղաքական հիմքերից:

Մոսկվայի արձագանքը ձևակերպվեց ԽՍՀՄ ԳԽ 1991թ. նոյեմբերի 27-ի որոշմամբ, որն առաջարկում էր ԱդրՀ և ՀՀ խորհրդարաններին «չեղյալ հայտարարել բոլոր իրավական ակտերը, որոնք փոփոխում են ԽՍՀՄ Սահմանադրության մեջ ամրագրված ԼՂԻՄ կարգավիճակը»[4]: Նոյեմբերի 28-ին ընդունված ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեի համապատասխան որոշումը[5] Խորհրդային Միության Սահմանադրությանը հակասող էին որակվում ՀԽՍՀ ԳԽ-ի 1989թ. դեկտեմբերի 1-ի որոշումները, ՀԽՍՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 1990թ. փետրվարի 23-ի որոշումը,

---

[1] *Տե՛ս* Քոթանջյան Հայկ, ***Ղարաբաղյան լուծման առանձնահատկությունները /քաղաքագիտական փորձաքննություն/:*** Ղարաբաղ. Հակամարտություն-համաձայնություն. ՀՀ ՊՆ «***Հայկական բանակ***» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում: Ե., 1997 թ., էջ 5-11: Տե՛ս Մանասյան Ալեքսանդր, ***Ղարաբաղյան հակամարտություն. իրավաքաղաքական փաստերի և փաստարկների նվազագույն փաթեթ***: Ե., 2008, էջ 3.

[2] *Տե՛ս.* «***Закон Азербайджанской Республики Об упразднении Нагорно-Карабахской автономной области Азербайджанской Республики***», г. Баку, 26 ноября 1991 г., № 279-XII// «Ведомости Верховного Совета Азербайджанской Республики», 1991 г., № 24, статья 448.

[3] Օրենքը վերանում էր ԼՂՀ վարչատարածքային սահմաններն ու վերանվանում մայրաքաղաքն ու շրջկենտրոնները: Նախկին ԼՂԻՄ շրջանների տարածքները տարլուծումը սահմանակից ադրբեջանական շրջանների կազմի մեջ փոխում էր «նորաստեղծ» վարչական միավորներում հայերի և ադրբեջանցիների քանակի համամասնությունը հօգուտ ադրբեջանցիների: Հիշյալ քաղաքականության առաջին նախադեպն էր օկուպացված Շահումյանի շրջանի՝ Կասում-Իսմայիլի շրջանի հետ միավորումը (*Տե՛ս.* Обращение президиума Верховного Совета Азербайджана к населению Шаумянского района. Газ. «***Бакинский рабочий***», (Баку), 15 января 1991 г.):

[4] *Տե՛ս* Постановление Государственного Совета СССР «***О мерах по стабилизации обстановки в НКАО и приграничных районах Азербайджанской Републики и Республики Армения***», 27 ноября 1991 г., Сб. «***Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах***», Ереван, 1995 г., с. 81.

[5] *Տե՛ս.* «***Постановлением Комитета Конституционного надзора СССР об Актах Верховного Совета СССР и его президиума и Верховных Советов Азербайджанской ССР (Азербайджанской Республики) и Армянской ССР (Республики Армения) о Нагорно-Карабахской Автономной Области***», Митюков М. «***Предтеча конституционного правосудия: взгляды, проекты и институциональные предпосылки***». М., 2006, 179 стр., էջ. 146–149:

ինչպես նաև ԱդրՀ 1991թ. նոյեմբերի 26-ի որոշումների դրույթները՝ ֆորմալ իրավական առումով ԼՂ հիմնախնդիրը վերադարձնելով «ելման դիրքի» կարգավիճակին:

Ընդհանուր անորոշության պայմաններում և ԽՍՀՄ ապագայի վերաբերյալ հանրապետությունների միջև շարունակվող բանակցությունների ֆոնի վրա ԼՂՀ-ն պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեր իր քաղաքական կարգավիճակը հստակեցնելու նպատակով: 1991թ. նոյեմբերի 27-ին ԼՂԻՄ ժողպատգամավորների Մարզային խորհուրդի նստաշրջանը ընդունեց «Հանրաքվեի ու ԼՂՀ ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին ժամանակավոր կանոնակարգ», հաստատեց հանրաքվեի հարցը՝ «Համաձա՞յն եք, որ հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն, որն ինքնուրույն կորոշի այլ պետությունների և հանրությունների հետ իր համագործակցության եղանակները»:

ԼՂՀ տարածքում, ներառյալ ադրբեջանաբնակ վայրերում ձևավորվեց 81 ընտրատարածք, քվեարկողների ցուցակի մեջ ընդգրկվեցին 132.328 ընտրող: Հանրաքվեի քվեաթերթիկները տպագրվել են հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով[1]:

Հանրաքվեն տեղի ունեցավ 1991թ. դեկտեմբեր 10-ին, իսկ դեկտեմբերի 8-ին ՌՍՖՍՀ, Ուկրաինայի և Բելառուսի ղեկավարները ստորագրել էին «Բելովեժյան համաձայնագիրը», որով Խորհրդային Միությունը՝ որպես միջազգային սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն, դադարել էր գոյություն ունենալուց: Թեև Բաքվի դրդմամբ ԼՂՀ-ում ապրող ադրբեջանցիները չմասնակցեցին հանրաքվեին, դա չազդեց հանրաքվեի օրինականության վրա, որն ամրագրվել էր քվեարկությունների արդյունքների վերաբերյալ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անկախության հանրաքվեի արդյունքների մասին արձանագրության» մեջ[2]: Հանրաքվեի մասնակիցների 99,89% (108.615 հոգի) քվեարկել է ԼՂՀ անկախության օգտին, «ոչ» է ասել 24 քաղաքացի (մասնակիցների 0,02 %):

ԼՂՀ պետականության ստեղծման և կառավարման, այդ թվում արտաքին քաղաքական գործառույթի հաստատութենացման ճանապարհին կատարած հաջորդ քայլը 1991թ. դեկտեմբերի 28-ին կայացած խորհրդարանական ընտրություններն էին: Այս դեպքում ևս ԼՂՀ իշխանությունները քայլեր են ձեռնարկել ադրբեջանցի բնակիչներին երկրի հասարակական-քաղաքական կյանքին ներգրավելու ուղությամբ[3]:

---

[1] Անկախության ճանաչմանն ու միջազգային ասպարեզում դրական վարկանիշի ամրապնդմանը ձգտող ԼՂՀ-ն հատուկ ուշադրություն էր դարձնում ԼՂՀ ամենամեծ էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցերին: Ազգությամբ ադրբեջանցի բնակիչների մասնակցությունը հանրաքվեին ապահովելու համար ԼՂՀ իշխանությունները դիմել են լրացուցիչ կազմակերպչական քայլերի, այդ թվում ԼՂ տարածքում տեղակայված Խորհրդային բանակի ստորաբաժանումների ջանքերով քվեաթերթիկները հասցվել են ԼՂ ադրբեջանաբնակ բնակավայրեր:

[2] *Տե՛ս* «***Արձանագրություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անկախության հանրաքվեի արդյունքների մասին***»,10-ը դեկտեմբերի 1991թ., http://www.nkr.am/hy/referendum/42/

[3] 81 ընտրատարածքներից 6 ադրբեջանաբնակներում (NN 33, 52, 60, 71, 72, 73) ընտրությունները չեն կայացել, արդյունքում ընտրվել է 75 պատգամավոր: (*Տե՛ս.* ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) պաշտոնական կայքէջը. http://cec.am/?p_ID=44:

1992թ. հունվարի 6-ին ԼՂՀ նորընտիր խորհրդարանը՝ առաջին գումարման Գերագույն խորհուրդը, ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին» հռչակագիրը[1], որը սահմանում էր ԼՂՀ արտաքին քաղաքականության ուղենիշները:

Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակվեց անկախ, ժողովրդավարական պետություն, որն ինքնուրույն կերպով է որոշում այլ պետությունների հետ իր համագործակցության ձևերը: Միաժամանակ ԼՂՀ-ն նախատեսում էր այլ պետությունների հետ իր հարաբերությունները կառուցել ինքնիշխանության, հավասարության սկզբունքների պահպանման, ուժի կիրառումից կամ ուժի սպառնալիքից փոխադարձ հրաժարման, վեճերի խաղաղ կարգավորման, ներքին գործերին չմիջամտելու, մարդու իրավունքները և հիմնական ազատությունները հարգելու, ժողովուրդների իրավահավասարության և իր ճակատագրի տնօրինման իրավունքի, պետությունների միջև համագործակցության, միջազգային իրավունքի ընդհանուր ճանաչում գտած սկզբունքներից և նորմերից, ԽՍՀՄ կնքած միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների բարեխիղճ կատարման հիման վրա[2]:

Ադրբեջանական Հանրապետությունը չճանաչեց հանրաքվեի արդյունքները, ու վերջինիս անցկացման օրը Միլլի մեջլիսն ընդունեց «Ղարաբաղի լեռնային մասում օրինականության և հասարակական կարգի հաստատման մասին» որոշում՝ հանրաքվեն որակելով սադրանք[3]: Հետագայում ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքի և դրանից բխող անկախ պետականության առկայության մերժումը դարձավ այդ նույն պետության թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության հիմքը:

Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության գործընթացը անցել է երեք փուլերով՝ անկախության հռչակագրի հրապարակում, այդ հարցով համաժողովրդական հանրաքվեի անցկացում և պետական անկախության մասին հռչակագրի հաստատում՝ ընտրված խորհրդարանի կողմից: Անկախության գործընթացն անցել է ԽՍՀՄ տրոհմանը և Հայաստանի ու Ադրբեջանի անկախացմանը զուգահեռ՝ որպես հիմք ունենալով նույն իրավական ակտերը, որով կարգավորվում էին ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու հետ կապված հարցերը: Չնայած ԽՍՀՄ կենտրոնական և Ադրբեջանական իշխանությունների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության կայացման դեմ ուղղված քայլերին՝ այնուամենայնիվ նորանկախ հանրապետությունը կարողացել է ամբողջացնել պետականաշինության այս կարևոր փուլը՝ իրավական ու ինստիտուցիոնալ հիմքեր ստեղծելով ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու համար:

---

[1] *Տե՛ս* Աբրահամյան Հրանտ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն 1991թ. օգոստոս-1992թ. հունվար. Փաստաթղթեր, Երևան 2011, 178-191

[2] *Տե՛ս.* նույն տեղում:

[3] *Տե՛ս:* В НКАО прошел референдум о независимости. Еженед. «Коммерсантъ», № 48 (92), 16.12.91:

Գրականություն

Գրքեր և հոդվածներ

1. Աբրահամյան Հրանտ, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն 1991թ. օգոստոս-1992թ. հունվար. Փաստաթղթեր», Երևան 2011, 178-191:
2. Մանասյան Ալեքսանդր, Ղարաբաղյան հակամարտություն. իրավաքաղաքական փաստերի և փաստարկների նվազագույն փաթեթ: Ե., 2008, էջ 3:
3. Քոթանջյան Հայկ, Ղարաբաղյան լուծման առանձնահատկությունները /քաղաքագիտական փորձաքննություն/: Ղարաբաղ. Հակամարտություն-համաձայնություն. ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում: Ե., 1997 թ., էջ 5-11:
4. Гурушкин Павел Юрьевич. Карабахский конфликт. Первые попытки переговоров: Ошибки и достижения посредников, Известия Российского государственного педагогического университета им. А.И. Герцена, Выпуск № 108/ 2009
5. В НКАО прошел референдум о независимости. Еженед. «Коммерсантъ», № 48 (92), 16.12.91:
6. Золян Сурен, Нагорный Карабах: Проблема и конфликт, 5.1. Политическая ситуация в регионе осенью 1991г., http://karabah.h18.ru/history/karabah/36-5.html

Փաստաթղթեր

1. «Արձանագրություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անկախության հանրաքվեի արդյունքների մասին»,10-ը դեկտեմբերի 1991թ., http://www.nkr.am/hy/referendum/42/
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին Հռչակագիր, 2-ը սեպտեմբերի 1991թ. http://www.president.nkr.am/am/nkr/nkr1
3. «Համատեղ կոմյունիկե՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ Բ. Ն. Ելցինի և Ղազախստանի նախագահ Ն. Ա. Նազարբաևի համատեղ առաքելության արդյունքների մասին», http://www.vn.kazimirov.ru/doc1.htm
4. Հռչակագիր Հայաստանի անկախության մասին, 23.08.1990թ., http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2602&lang=arm
5. Ведомости Съезда народных депутатов СССР и Верховного Совета СССР, 1990. № 15, т.253 http://constitutions.ru/?p=2973 (12.04.13)
6. «Декларация Верховного Совета Азербайджанской Республики о восстановлении государственной независимости Азербайджанской Республики, принятая на внеочередной сессии Верховного Совета», газ. «Бакинский рабочий», (Баку), 03.09.91.
7. «Закон Азербайджанской Республики Об упразднении Нагорно-Карабахской автономной области Азербайджанской Республики», г. Баку, 26 ноября 1991 г., № 279-XII// «Ведомости Верховного Совета Азербайджанской Республики», 1991 г., № 24, статья 448.

8. Конституционный акт о государственной независимости Азербайджанской Республики. Баку, 18 октября 1991 г., газ. «Бакинский рабочий», (Баку), 07.11.91.
http://azerbaijan.az/portal/History/HistDocs/Documents/ru/09.pdf
9. Обращение президиума Верховного Совета Азербайджана к населению Шаумянского района. Газ. «Бакинский рабочий», (Баку), 15 января 1991 г.)
10. Постановление Государственного Совета СССР «О мерах по стабилизации обстановки в НКАО и приграничных районах Азербайджанской Републики и Республики Армения», 27 ноября 1991 г., Сб. «Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах», Ереван, 1995 г., с. 81.
11. «Постановлением Комитета Конституционного надзора СССР об Актах Верховного Совета СССР и его президиума и Верховных Советов Азербайджанской ССР (Азербайджанской Республики) и Армянской ССР (Республики Армения) о Нагорно-Карабахской Автономной Области», Митюков М. «Предтеча конституционного правосудия: взгляды, проекты и институциональные предпосылки». М., 2006, 179 стр., էջ. 146–149:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ա.Փ.Ենգոյանը: